<<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամ

<<Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման >> ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Դաստիարակ՝ Ազգանուշ Ալեքսանյան

Մանկապարտեզ՝ <<Նանուլիկ>> ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Գլուխ 1 Ընտանիքի դերը երեխայի զարգացման գործում

1.1 Ընտանիքի դերը երեխայի զարգացման գործում

1.2 Մանկապարտեզի դերն ու նշանակությունը երեխայի զարգացման գործում

1.3 Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին

1.4 Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը

1.5 Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցության ձևերը և ուղղությունները

Գլուխ 2 Գործնական աշխատանք

Եզրակացություն

Օգտագործած գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակելով երեխաներին՝ այժմյան ծնողները դաստիարակում են մեր երկրի ապագա պատմությունը, նշանակում է՝ նաև աշխարհի պատմությունը:

Ա. Մակարենկո

Յուրաքանչյուր երեխայի զարգացման առանցքային փուլը սկսվում է վաղ մանկությունից: Այս շրջանում ստացած և երեխայի հիշողության մեջ դաջված ամեն մի տրպավորություն և իրադարձություն ազդում է նրա հետագա ողջ կյանքի ընթացքի վրա: Երեխաների զարգացումով և դաստիարակությամբ պետք է զբաղվել դեռ վաղ տարիքից: Երեխաների զարգացումը և դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց միևնույն ժամանակ հետաքրքիր և բարեհաճ գործ է: Երեխայի անձի ձևավորման գործում առաջնային և կարևոր տեղ է հատկացվում ընտանիքին: Ընտանիքն է հանդիսանում այն անփոխարինելի վայրը, որտեղ երեխան ստանում է այն, ինչ անհրաժեշտ է բնականոն և ներդաշնակ զարգացման համար: Ընտանիքին ոչինչ և երբեք չի կարող փոխարինել, քանզի ընտանիք գաղափարը յուրօրինակ և անփոխարինելի է: Ընտանիքում երեխային պետք է պարուրել անսահման սիրով և հոգատարությամբ, հետևողականությամբ և անմնացորդ նվիրումով, չէ՞ որ ընտանիքը, մասնավորապես ծնողները կերտում են նոր անհատականություն, ում համար պատասխանատու են: :Ճշմարիտ է. յուրաքանչյուր երեխա իր ընտանիքի հայելին է: Ծնողները պետք է հանդի-սանան դրական օրինակ երեխայի համար, քանի որ երեխաները սովորում են տեսնե-լով: Այդ իսկ պատճառով ընտանեկան դաստիարակությունը կարելի է համարել նաև ինքնադաստիարակություն և ինքնակրթություն ծնողների համար:

Ընտանիքում են դաստիարակվում երեխայի ինքնասպասարկումը, ինքնակազմակերպումը, պատասխանատվությունը, հոգատարությունը: Ընտանիքին՝ երեխայի դաստիարակության և զարգացման գործում մեծ աջակցություն է տրամադրում մանկապարտեզը, որը երեխաների համար հանդիսանում է սոցիալականացման վայր, որտեղ զարգանում են երեխայի սոցիալական և խոսքային հմտությունները, թիմում աշխատելու հմտությունները, և հուզական աշխարհը: Ընտանիքն ու մանկապարտեզը չեն

կարող փոխարինել միմյանց, բայց լրացնել միմյանց կարող են, որը հստակ երևում է ընտանիք մանկապարտեզ համագործակցության մեջ:

Հետազոտական աշխատանքի ընտրված թեման ոչ միայն կարևոր , այլ նաև արդիական է բոլոր ժամանակներում: Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել ընտանիք մանկապարտեզ կապի առանձնահատկությունները, կարևորությունը երեխայի զարգացման գործում թե՛ ընտանիքի, և թե՛ մանկապարտեզի տեսանկյունից, նաև բացահայտել այն կարևոր և անքակտելի կապը, որը կա մանկապարտեզի և ընտանիքի միջև:

Հետազոտական աշխատանքի բաժիններն են՝

- ներածություն
- առաջին գլուխ
- երկրորդ գլուխ
- եզրակացություն
- գրականության ցանկ

ԳԼՈՒԽ 1 ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Երեխային շրջապատող առաջին աշխարհը, հասարակության սկզբնական միավորը ընտանիքն է, որտեղ դրված են անհատականության հիմքերը: Ընտանիքն անհատի ձևավորման վրա ազդող հիմնական սոցիալական գործոնն է: Այն, ինչ երեխան ձեռք է բերում ընտանիքում, պահպանում է իր հետագա ողջ կյանքի ընթացքում:

Ընտանիքը երեխայի կյանքում առաջին սոցիալական խումբն է, որի շնորհիվ նա ծանոթանում և տիրապետում է առաջին սոցիալական դերերին, ձեռք է բերում սոցիալական վարքագծի փորձ: Ընտանիքում է, որ երեխան անում է իր առաջին քայլերը, ապրում ուրախության և տխրության առաջին զգացումները, սովորում սիրել և վստահել: Երեխայի աշխարհայացքը, բնավորությունն ու խառնվածքը ձևավորվում է ընտանիքում: Ընտանիքը եղել և մնում է անձի բարոյադաստիարակման հիմնական օղակն ու վճռական գործոնը: Ընտանիքից է սկսվում բարոյական դաստիարակման նախահիմքերի կառուցումը: Ընտանիքը հանդես է գալիս որպես կրթության գործոն, քանի որ երեխաների համար տարբեր միջոցառումների կազմակերպիչ է: Ընտանիքում երեխային ծանոթացնում են տարբեր տեսակի գործունեության՝ ճանաչողական, առարկայական, խաղային,աշխատանքային, կրթական, նաև հաղորդակցական գործունեության:

Երեխայի ճիշտ զարգացումն իրականացվում է առաջին հերթին ծնողների հոգածության շնորհիվ: Երեխան ընտանիքում է սովորում մտածել, խոսել, հասկանալ, շփվել…

Ընտանիքի, մասնավորապես ծնողների ճիշտ ուղղորդող, համակարգված դաստիարակչական մեթոդները, գիտելիքները, խելամտորեն կիրառվող խրախուսանքն ու պատիժը երեխային նախապատրաստում են ապագա անկախ կյանքին հասրակության մեջ՝ փոխանցելով հոգևոր արժեքներ, բարոյական նորմեր, վարքագծի ձևեր, ավանդույթներ:

Ժամանակակից մանկավարժությունն ընդգծում է ընտանիքի գերակայող դերը երեխայի դաստիարակության և անձի ձևավորման գործում: Փաստ է, որ երեխայի վաղ տարիքը, նրա մանկությունն անջնջելի հետք են թողնում երեխայի հիշողության մեջ:

Ընտանիքը կարգավորում է երեխայի հարաբերությունները շրջակա միջավայրի հետ. ընտանիքում երեխան ստանում է վարքի բարոյական չափանիշներ: Ծնողները երեխայի համար ընդօրինակման օբյեկտ են հանդիսանում. այն, ինչ տեսնում է երեխան, դա էլ սովորում է: Այդ իսկ պատճառով, յուրաքանչյուր ծնող պետք է ցուցաբերի դրական վարքագիծ, ձգտի երեխայի համար լինել օրինակելի կերպար: Ծնողները նաև պետք է ինքնադաստիարակությամբ և ինքնակրթությամբ զբաղվեն:

Երեխայի ներդաշնակ զարգացմեն գործում առանցքային դեր ունեն հետևյալ կետերը.

- Երեխայի առաջնային կարիքները բավարարելը – ընտանիքի անդամները կարող են առանցքային դեր խաղալ երեխայի կարիքները բավարարելու գործում՝ ապահովելով երեխային շրջապատող միջավայրի անվտանգությունը և նրան պաշտպանելով սթրեսից
- Զարգացումը խթանող գործելակերպեր կիրառելը և դրական վարքագիծ դրսևորելը – ընտանիքի անդամները հաճախ կանոնավոր կերպով ներգրավված են երեխայի դաստիարակության գործընթացում՝ կիրառելով ծնողական դրական գործելակերպ:
- Օրինակ ծառայելը – երեխաները զգում և տեսնում են ընտանիքում տիրող մթնոլորտը: Այն ընտանիքներում, որտեղ կա սիրո և ներդաշնակության ամուր հիմք, երեխան սովորում է փոխադարձ վստահություն և ընտանեկան կապվածություն:

Ընտանեկան արժեքները նաև նպաստում են երեխաների հոգեկան և մտավոր ունակությունների զարգացմանը: Այսպիսով, պարտականություններ կիսելով, երեխայի զարգացմանը նպաստող գործողություններ կատարելով, երեխայի համար անվտանգ միջավայր ապահովելով, ընտանիքները կարող են առավելագույնի հասցնել իրենց երեխաների ներդաշնակ զարգացումը: Ընտանեկան դաստիարակության առավել արդյունավետ կազմակերպման նպատակով հարկավոր է կիրառել ընտանեկան դաստիարակության սկզբունքային մոտեցումներ, որոնք կոչված են ուղղորդելու տվյալ գործընթացը և շտկելու հնարավոր սխալներն ու թերությունները:

Ընտանեկան դաստիարակության սկզբունքները գրեթե չեն տարբերվում դաստիարակության մյուս սկզբունքներից: Դրանք են՝

- մոտեցում մարդասիրական և գթասրտության դիրքերից
- երեխայի հանդեպ սիրո և հարգանքի դրսևորում
- ընտանեկան փոխհարաբերություններում լավատեսության գերակայություն
- երեխայի հետ բաց և վստահելի հարաբերությունների հաստատում
- երեխային՝ դաստիարակության միասնական պահանջների ներկայացում
- հետևողականություն և պահանջկոտություն
- երեխային՝ ընտանեկան գործունեության մեջ ակտիվ ներգրավում

Երեխաների հետ վարվելիս անհրաժեշտ է չափի զգացում՝ սիրո և պահանջկոտության, փաղաքշանքի և խստության մեջ: Ծնողական սերը երեխայի բարեկեցության, հոգեկան և մարմնական առողջության պահպանման աղբյուրն ու երաշխիքն է: Երեխաների նկատմամբ հարկավոր է <<պահանջկոտ սեր>>: Ծնողների գլխավոր խնդրին է երե-խայի մոտ վստահություն սերմանելը: Երբե՛ք և ո՛չ մի պարագայում երեխան չպետք է կասկածի ծնողական սիրո վերաբերյալ: Ինչպես ասել է մեծանուն մանկավարժ Ա. Մակարենկոն .

<< Սերը դա ամենամեծագույն զգացմունքն է, որը հրաշքներ է կատարում, որը նոր մարդ է ձևավորում և մեծագույն մարդկային արժեքներ է ստեղծում>>:

Ծնողին, երեխայի դաստիարակության և սոցիալական զարգացման գործընթացում անփոխարինելի աջակցություն է տրամադրում մանկապարտեզը, որը ընտանիքից հետո հանդիսանում է մյուս կարևոր ինստիտուցիոնալ կառույցը:

1.2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ինչքան էլ կարևորվում և առաջնային տեղ է հատկացվում ընտանեկան դաստիարակությանը, պակաս չի կարևորվում նաև մանկապարտեզի դերն ու նշանակությունը երեխայի զարգացման գործում: Այո՛, մարդկային շփման առաջին փորձը երեխան ստանում է ընտանիքում, բայց հասարակությանն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար հանդիսանում է մանկապարտեզը: Ընտանիքին աջակցելու նըպատակով պետությունը ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ, որոնք էլ ապահովում են երեխայի նախադպրոցական կրթությունը: Նախադպրոցական կրթությունը նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման, դաստիարակության, ուսուցման և խնամքի գործընթաց է, որը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալ-անձնային զարգացմանը, ինքնասպասարկմանը, սոցիալականացմանը, կյանքի հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, աշխարհաճանաչման, ինքնուրույնության և ինքնաճանաչման փորձի ձեռքբերմանը, երեխայի իրավունքի պաշտպանությանը, նրա արժանապատվության նկատմամբ հարգանքի:

Մանկապարտեզի շնորհիվ երեխան ինտեգրվում է հասարակություն: Մնկապարտեզն այն վայրն է, որտեղ կառուցվում է երեխայի սոցիալական կերպարը և զարգանում նրա մտավոր ուժերը: Այստեղ զարգանում է երեխայի հետաքրքրություններն ու ինքնաճանաչումը, սեփական ուժերի նկատմամբ վստահությունը, ճանաչողական հմտություններն ու իմացական կարողությունները, ձևավորվում է երեխայի <<ես>>- ը:

Մանկապարտեզը, ի տարբերություն ընտանեկան միջավայրի, երեխային հնարավորություն է տալիս շփվել հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել երեխայակենտրոն ծրագրերով՝ նրա տարիքային առանձնահատկությունների համապատասխան: Մանկապարտեզում պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որը կլինի անվտանգ, զարգացնող, առարկայական, խթանող…Մանկապարտեզում զարգացնող առարկայական միջավայրը պետք է համապատասխանի նախադպրոցականի կարիքների, հետաքրքրությունների շրջանակին: Երեխայի զարգացման կարևորագույն

նախապայմանը զարգացման բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական, սոցիալական և իմացական փոխկապվածությունն է: Հաճախելով մանկապարտեզ՝ երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում: Մանկապարտեզում երեխայի համար սահմանվում է հատուկ օրակարգ, իսկ երեխայի հետ աշխատում է մանկավարժական անձնակազմը:

Յուրաքանչյուր երեխա անհատականություն է՝ իր բնավորությամբ, խառնվածքով, իր հայացքներով և իրեն շրջապատող աշխարհի մասին իր ուրույն պատկերացումներով: ՈՒստի, մանկավարժական աշխատողը պետք է ցուցաբերի անհատական մոտեցում յուրաքանչյուր երեխայի՝ հաշվի առնելով տվյալ երեխայի կարողություններն ու տարիքային առանձնահատկությունները, երեխայի մտավոր և ֆիզիկական հնարավորությունները: Մանկավարժական աշխատողը պետք է օժտված լինի մանկավարժին բնորոշ բարձր հատկանիշներով՝ բարությամբ, անաչառությամբ, համբերատարությամբ, ազնվությամբ: Մանկավարժական աշխատողը պետք է արդարամիտ և ներողամիտ լինի, ինչպես նաև սրտացավ և ապրումակցող: Նշված մարդկային բարձր որակների շնորհիվ նա կշահի երեխաների վստահությունն ու կդառնա նրանց խաղընկերը:

Երեխաներն ակտիվ սովորողներն են, ովքեր լավ են սովորում ա՛յն միջավայրում, որտեղ բավարարվում են նրանց ֆիզիկական և հոգեբանական կարիքները, որտեղ նրանք իրենց պաշտպանված են զգում, գնահատվում են որպես յուրահատուկ անհատներ և ակտիվորեն ներգրավվում հմտություններ և գիտելիքներ ձեռք բերելու նըպատակով կազմակերպած աշխատանքներում: Մանկապարտեզում մանկավարժակաան աշխատողը պետք է պլանավորի ամենօրյա գործունեությունը, նաև պլանավորի տարատեսակ խաղեր, և դիտարկումներ կատարելով փորձի լրացնել բացթողումներն ու շտկի թերությունները: Մանկապարտեզը հանդիսանում է այն անփոխարինելի կառույցը, որը նպաստում և ապահովում է երեխայի ներդաշնակ զարգացումը: Մանկապարտեզ հաճախած երեխան հեշտությամբ է հարմարվում դպրոցին՝ կիրառելով մանկապարտեզում ստացած սոցիալական փորձը, գիտելիքներն ու հմտությունները:

1.3 ԸՆՏԱՆԻՔԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿՅԱՆՔԻՆ

Ընտանիքն ու մանկապարտեզն ունեն իրենց առանձնահատուկ դերն ու նշանակությունը երեխայի կյանքում, և չեն կարող փոխարինել միմյանց: Հաջողության պայմանն է՝ վստահության գործարար կապերի հաստատումը, ծնողների և մանկավարժական աշխատողի դաստիարակչական դիրքորոշման ճշտումը: Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ մանկավարժական աշխատողը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների և հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին: Ծնողները պետք է ակտիվորեն մասնակցեն մանկապարտեզի կյանքին: Ժամանակակից ծնողը կարիք ունի նոր տիպի, նոր թեմայով, հին թեմաների՝ նոր հնչեղությամբ արծարծումներիև երկխոսության: Մանկավարժական աշխատողի կողմից այդ բոլոր թեմաների բացահայտումներն ուղի են հարթում՝ ծնողներին տանելու դեպի այն ծիրը, ուր գործում է ծնողական երջանկության բանաձևը:

Ընտանիք – մանկապարտեզ դրական համագործակցությունը երեխաների համար ապահովում է մի միջավայր, որտեղ երեխաներն իրենց զգում են կարևոր, սիրված և գնահատված: Ծնողի ստացած օբյեկտիվ տեղեկատվությունը երեխայի մասին, և ծնող -դաստիարակ համատեղ աշխատանքը կծառայի ի շահ երեխայի՝ նպաստելով նրա ներդաշնակ և բազմակողմանի զարգացմանը:

Մանկապարտեզ-ընտանիք կապը հիմնվելու է փոխադարձ վստահության վրա: Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է դաստիարակչական աշխատանքի արդյունավետությունը: Ծնողի հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար մանկավարժական աշխատողը պետք է բազմաբնույթ, տարատեսակ գործողություններ ծավալի, կիրառի տարբեր ռազմավարություն, լինի ստեղծագործ, ճկուն միտք ունենա, բարեհամբույր, բանիմաց, մեծահոգի, համբերատար և ապրումակցող լինի:

1.4 ԸՆՏԱՆԻՔԻ և ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը: Այն առավել արդյունավետ է, եթե հիմնավորված, համակարգված է, և օրգանապես միահյուսվում է դաստիարակի ընդհանուր մանկավարժական գործունեությանը: Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության և զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Ծնողների հետ տարվող աշխատանքներում անհրաժեշտ է ապահովել հետևյալ պահանջները.

- Երեխայի ընտանիքի կենսաձևի ուսումնասիրում
- Երեխայի դաստիարակության մեջ մանկապարտեզի և ընտանիքի միասնական պահանջների սահմանում և պահպանում
- Երեխաների ազատ ժամի արդյունավետ օգտագործում, նաև ծնողների ներգրավում այդ աշխատանքների մեջ
- Ծնողների հետ վստահելի և գործնական հարաբերությունների հաստատում, երեխայի զարգացման ընթացքի մասին անհրաժեշտ տեղեկատվության փոխանակում
- Ծնողների մանկավարժական գիտելիքների հարստացում
- Պրակտիկ մանկավարժական օգնության ցուցաբերում
- Ծնողների՝ մանկապարտեզ այցելելու պարբերականության ապահովում
- Ծնողներին համապատասխան տեղեկատվության տրամադրում

Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել երեխաներին ՝ ինքնուրույն հասնելու հաջողության: Գոյություն ունենն մանկապարտոզ-ընտանիք արդյունավետ համագործակցության երկու հիմնական ուղիներ՝

1. Հետևողական , հստակ, երկկողմանի հաղորդակցություն
2. Նախադպրոցական հաստատության աշխատանքներում ծնողների ներգրավման բազմազան միջոցներ

Ծնողներին ուշադիր լսելով՝ կարելի է արժեքավոր տեղեկություններ ստանալ և փոխօգնության բաց հարաբերություններ հաստատել: Երկկողմանի և կանոնավոր հաղորդակցության միջոցավ ծնողներն ու դաստիարակները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխաների բնականոն զարգացման:

1.5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մանկավարժական աշխատողի կողմից ծնողների հետ համատեղ աշխատանքն իրականացվում է տարաբնույթ ձևերով՝ միջոցառումներ և խաղեր, մանկավարժական զրույցներ ու թեմատիկ խորհրդատվություններ, այցելություններ, բաց դռների օրեր, կլոր սեղաններ, բանավեճեր, խաղային սցենարներ, ցերեկույթներ, հատուկ ծրագրով կազմակերպվող թրեյնինգներ և խմբային հանդիպումներ:

Մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր և արդյունավետ ուղղություններն են ՝

- **Շաբաթական կամ ամսական լրատուներ.** տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:
- **Ծնողական ժողովներ.** քննարկում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգություններին հետ կապված հարցեր:
- **Ծնողական համաժողովներ.** դրանց նպատակը ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումն է:
- **Առավոտյան հանդիպումներ.** որոնց ընթացքում ծնողներին նախապես հայտնում ենք ներկայացնող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:
- **Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին.** այդ ժամանակ դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:

- **Գրքերի փոխանակումներ.** սրանք ոչ պաշտոնական հանդիպումներ են այն ծնողների և մանկավարժների համար, ովքեր հետաքրքրվում են գրքով: Նրանք հավաքվում են՝ կիսելու իրենց մտորումներն ու կարծիքները ընթերցած գրքերի մասին:
  Կարևոր տեղ է հատկացվում ծնող-մանկավարժ ժողովների անցկացմանը: Դրանց նախապատրաստումը դաստիարակները պետք է դիտեն որպես մի շարունակական գործընթաց, որի ժամանակ ծնողներին տեղեկատվության ձևով հաղորդվում են մանկավարժական գիտելիքներ:
- **Տնային այցելություններ.** Ծրագրերը բովանդակային և մեթոդական առումով խիստ բազմազան են: Տնային այցելությունները մի յուահատուկ ուղի են հարթում դեպի ընտանիք և բացառիկ տեղեկատվություն ապահովում ընտանեկան իրավիճակի մասին:
- **Ոչ պաշտոնական գրառումներ.** մանկավարժը երեխայի հետ կարող է տուն ուղարկել կարճ գրություն, որոնք կպարունակեն որևէ տեղեկություն երեխայի գործողությունների մասին:
- **Անհատական գրառումների գրքույկներ.** այս գրքույկները կարող են ամեն օր տնից հաստատություն և հակառակը փոխանցել ընթացիկ տեղեկատվություն:
- **Պատի տեղեկատվական թերթեր.** սրանք օգտակար են՝ միշտ թարմ տեղեկատվություն տրամադրելու առումով: Սրանց միջոցով հնարավոր է ազդարարել ժողովները, միջոցառումները, մանկապարտեզի անցուդարձը:
- **Առաջարկությունների տուփ.** ծնողները կարող են տուփի մեջ գցել գրրավոր ձևակերպած իրենց հուզող հարցը, առաջարկել մտքեր:
  Մանկապարտեզում պետք է գործեն նաև <<Վստահության հեռախոս>>, <<Մանկավարժի հյուրասրահ>>, <<Գաղափարների տոնավաճառ>>: Դրանք հաղորդակցման և համագործակցության ժամանակակից ձևեր են:

Մանկապարտեզ ընտանիք կապը հիմնվելու է փոխադարձ վստահության վրա: Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է այն:

ԳԼՈՒԽ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ՝

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Թեմա ՝ ***Հեքիաթի դերը երեխայի կյանքում***

Նպատակը՝ ***խթանել ընթերցանությունը, նպաստել մանկապարտեզ ընտանիք կապի զարգացմանը և ամրապնդել համագործակցությունը ծնողների և մանկավարժական աշխատողի միջև***

Մանկապարտեզի կյանքում ընտանիքի ներգրավումը ամեն մանկավարժ յուրովի է պատկերացնում՝ ելնելով իր մանկավարժական մոտեցումներից և սկզբունքներից: Անչափ կարևորվում է զարգացնել փոխգործակցություն ընտանիքի հետ, անհրաժեշտ է գործի դնել հաղորդակցմանը նպաստող հմտություններ, ընտանիքի անդամներին ներգրավել մանկապարտեզի ծնողական համայնքներում և նրանց ընդունել որպես երեխայի հարցերով զբաղվող թիմի լիիրավ անդամ: Ամուր փոխհարաբերությունների համար շատ կարևոր է ծնողներին ապրումակցելը. փորձել հասկանալ ինչ են մտածում և զգում ծնողները, ինչ մըտավախություններ ունեն, և ինչպես կարելի է համագործակցության միջոցով հասնել ցանկալի արդյունքի՝ որը կբխի միայն ու միայն երեխայի շահերից:

Որպես հետազոտական աշխատանքի գործնական մաս՝ ուսումնասիրել եմ ընտրված թեման և կատարել հետևյալը.

պլանավորելով ժողով՝ հայտարարություն տարածեցի կայանալիք ժողովի մասին և ընդհանուր տեղեկատվությունից բացի, յուրաքանչյուր ծնողի կոնկրետ տեղեկություններ հաղորդեցի ժողովին առնչվող իմ նպատակների մասին: Նըպատակս կայանում էր նրանում, որ ծնողները մինչև մեր հանդիպումը մտորելու թեմա ունենային: Խնդրեցի ժողովին իրենց հետ բերել այն հեքիաթի գիրքը, որը վերջերս էին կարդացել իրենց բալիկների համար: Ժամանակ հատկացրեցի ժողովի համապատասխան միջավայրի ստեղծմանը. ստեղծեցի ընկերական մըթնոլորտ, իսկ սեղանին դրեցի նկարազարդ մանկական գրքեր՝ հիմնականում հեքիաթի:

Ծնողների հետ հաղորդակցվեցի իրենց մակարդակին համապատասխան՝ խուսափելով նեղ մասնագիտական բառապաշարի օգտագործումից, այնպես արեցի,որ ծնողներն իրենց ցանկալի հյուր զգային, ապա խոսեցի բուն թեմայից ՝ հնարավորինս կաըևորելով այն: Ծնողներին ներկայացրեցի հեքիաթների դերն ու նշանակությունը երեխաների զարգացման և դաստիարակության, աշխարհա-ճանաչման գործում: Կազմակերպեցինք ընդհանուր քննարկում, որի ընթացքում պարզեցի, որ ծնողները ևս համակարծիք էին, որ երեխային դեռ մանկուց պետք է ծանոթացնել գրքին, սովորեցնել գրքի հետ վարվելու կանոնները, սիրել գիրքն ու արժևորել այն: Ծնողներին խորհուրդ տվեցի երեխաների համար գրքեր ընտ-րելիս նախապատվությունը տալ նկարազարդ գրքերին, որոնք ավելի գրավիչ են երեխաների համար: Առաջարկեցի նախքան հեքիաթի ընթերցումը երեխային հնարավորություն տալ թերթել գրքի էջերը, որոնք հետաքրքիր և գրավիչ են երեխայի համար և դիտելիս երեխաների մոտ կծնվեն բազում հարցեր, որոնց ծնողը պետք է պատասխանի՝ բավարարելով երեխայի հետաքրքրությունը: Բաց հարցերի միջոցով ծնողներին դրդեցի արտահայտելու իրենց կարծիքը, խոսել թեմայի շուրջ: Ծնողական ժողովն անցավ բավականին ջերմ մթնոլորտում, բոլոր ծնողները հնարավորություն ունեցան արտահայտելու իրենց կարծիքը, և վերջում բոլորն էին համակարծիք, որ հեքիաթի ընթերցումը կարևոր է երեխայի զար-գացման և դաստիարակության համար: Ժողովի ավարտին խնդրեցի ընտրել ծնողներից մեկին, ով հաջորդ խոսքի զարգացման պարապմունքին երեխաների համար հեքիաթ կկարդար: Բոլորին դուր եկավ գաղափարը, այսպիսով, պլանավորեցի խոսքի զարգացման պարապմունք ՝ ծնողի մասնակցությամբ:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԼԱՆ

Խումբ՝ կրտսեր 2-րդ

Պարապմունքի տևողությունը 15-20ր

Թեմա՝ Համագործակցություն

Տեսակը՝ Հեքիաթի ընթերցում ՝ Պապն ու շաղգամը

Նպատակը՝ Ծնողին ներգրավել ուսումնական գործընթացի մեջ, ամրապնդել ընտանիք մանկապարտեզ կապը: Զարգացնել երեխաների՝ գեղարվեստական ստեղծագործությունը լսելու, գնահատելու, հարցերին պատասխանելու կարողությունը, կապակցված խոսքը, հարստացնել բառապաշարը շաղգամ, համագործակցել բառերով:

Նախապատրաստական աշխատանք -Ծնողի հետ նախօրոք պլանավորել պարապ-մունքը, երեխաներին նախապատրաստել պարապմունքին

Անհրաժեշտ նյութեր՝ Պապն ու շաղգամը հեքիաթի նկարազարդումներ

Ընթացքը

Խթանման փուլ

Երեխաների հետաքրքրությունը շարժեցի՝ ասելով, որ հյուր ունենք, ով հեքիաթասաց ծնող է, և ծնողին ներս հրավիրեցի: Ծնողը երեխաներին ողջունելուց հետո ձևացրեց, որ իր հետ բերած հեքիաթի գրքերով լի ճամպրուկը չի կարողանում ներս բերել, քանի որ շատ ծանր է: Ապարդյուն ջանքերից հետո ծնողը երեխաներից մեկին խնդրեց օգնել իրեն, սակայն էլի ոչինչ չստացվեց՝ ճամպրուկը չկարողացան տեղաշարժել, այսպես, երեխաներից մի քանիսին կանչելով՝ ծնողը,տեսնելով որ ոչինչ չի ստացվում, խնդրեց բոլորին օգնել իրեն, և ի զարմանս երեխաների՝ ճամպրուկը կարողացան համատեղ ուժերով տեղաշարժել: Քննարկեցին և ամփոփեցին կատարվածը…

Իմաստի ընկալման փուլ

Ծնողն ընթերցեց հեքիաթը և յուրաքանչյուր իրավիճակը ներկայացնող ամփոփ մտքին զուգահեռ ցուցադրեց հեքիաթի այդ դրվագին համապատասխան նկար: Ապա քննարկեցին հեքիաթը: Հարց ու պատասխանի միջոցով ամրապնդեցին թեման: Հարցերն այսպիսին էին՝ ի՞նչ էր ցանել պապը, ինչու՞ պապը չկարողացավ շաղգամը հողից հանել, ու՞մ օգնության կանչեցին, ովքե՞ր օգնեցին պապիկին…

Ֆիզկուլտ-դադար

Կշռադատմա փուլ

Ծնողը ասացվածքներ ներկայացրեց փոխօգնության մասին ՝ բացատրելով դրանց իմաստը

Պարապմունքը դիտարկեցին տնօրենը և ավագ խմբի դաստիարակը, ովքեր հայտնեցին իրենց կարծիքը պարապմունքնի մասին:

Տնօրեն- Դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակներին՝ մանկապարտեզի ուսումնական գործընթացի մեջ ներգրավելով ծնողին: Ինչպես նկատեցի՝ երեխաներին ևս դուր եկավ, որ այս անգամ ծնողներից մեկն է հեքիաթ պատմելու իրենց համար, իսկ երբ նրանք փորձում էին օգնել ծնողին ճամպրուկը ներս բերել, նկատեցի մեծ ոգևորություն փոքրիկների մոտ: Շնորհակալություն, թե՛ դաստիարակին, և թե՛ ծնողին՝ պատրաստակամության համար, շատ հաճելի պարապմունք ստացվեց:

Դիտարկող դաստիարակ- Եվս մեկ անգամ համոզվեցի, թե ինչքան կարևոր է ծնող մանկապարտեզ համագործակցությունը, որը դրված էր այս պարապմունքի հիմքում և ակնհայտ երևում էր: Կարևորում եմ այն փաստը, որ երեխաները ծնողի ներկայութ-յունից չխառնվեցին, այլ հակառակը՝ ուրախացան և ոգևորվեցին՝ փորձելով օգնել նրան դժվար իրավիճակում: Այո՛, դաստիարակը հասավ իր նպատակին, թեմայի ընտրությունը ևս կարևոր ու արդիական էր: Պարապմունքի հիմքում մանկապարտեզ ընտանիք համագործակցությունն էր, որն ակներև էր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնասիրելով մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում թեման, եկա այն եզրակացության, որ երեխաների զարգացման և դաստիարակության գործում առաջնային տեղն ու դերն ընտանիքինն է: Սակայն կարևորվում և առավելագույնի է հասցվում նաև մանկապարտեզի տված անմնացորդ նվիրումն ու ջանքը, որից շահում է նախ և առաջ երեխան: Նաև համոզվեցի, որ ընտանիքն ու մանկապարտեզը չեն կարող փոխարինել միմյանց, բայց լրացնել միանշանակ կարող են: Հասկացա, թե ինչքան կարևոր է մանկապարտեզի՝ մասնավորապես մանկավարժական աշխատողի դերը ընտանիք մանկապարտեզ համագործակցության մեջ:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, երեխան է իր կրթության և զարգացման գործի գլխավոր դերակատարը:

Մանկապարտեզ ընտանիք համագործակցության հիմքում ընկած է փոխադարձ հարգանքն ու վստահությունը, փոխօգնությունը: Եթե գրագետ և համակարգված կազմակերպվի մանկապարտեզ ընտանիք համագործակցությունը, ապա դրանից կշահեն երեխան, ընտանիքն ու մանկապարտեզը: Այն մանկապարտեզներում, որտեղ կարևորվում է ընտանիք մանկապարտեզ համագործակցությունը, երեխաներն ավելի ինքնավստահ, երջանիկ և զարգացած են: Եվ ինչ կա աշխարհում ավելի լավ , քան տեսնել մաքուր ու ջինջ էակների՝ երեխաների, ովքեր մի կողմից պարուրված են ընտանեկան ջերմությամբ ու սիրով, իսկ մյուս կողմից՝ մանկապարտեզի հոգատարությամբ և աջակցությամբ…Երբեք չմոռանանք, որ երեխաներն են մեր ապագան, որը մենք կերտում ենք ինքներս:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Քայլ առ քայլ

2.Մակարենկո Ա.Ս.<<Դաստիարակություն ծնողության վերաբերյալ>> 1940թ.

3.<<Նախաշավիղ>> հանդես

4.Մանկապարտեզի կրթական համալիր ծրագիր 2011թ.

5.ՈՒսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար 2010թ. Լ. Սմբատյան, Հ.Միտոյան

6.<<Նախադպրոցական մանկավարժություն>> Ս.Մարության, Ա. Դալլլաքյան 2008թ.

7. <<Դպիր>> ամսագիր